«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ
ԽՈՐՀՈՒՐԴ

″20″ հուլիսի 2015թ.

ՈՐՈՇՈՒՄ N _110-Լ

«ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-Ի ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի Կանոնադրությամբ և Խորհրդի կանոնակարգով՝ «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի խորհուրդը՝

ՈՐՈՇԵՑ

1. Մինչև սույն թվականի դեկտեմբերի 25-ը թողարկել անվանական արժեկտրոնային պարտատոմսեր՝ 1,000,000 (մեկ միլիոն) ԱՄՆ դոլար և 100,000,000 (մեկ հարյուր միլիոն) ՀՀ դրամ թողարկման ընդհանուր ծավալով:
2. Հաստատել Ընկերության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, արժեկտրոնների վճարման և մարման կարգն ու պայմանները՝ համաձայն սույն որոշմանը կից Հավելված 1-ի:
3. Հաստատել Ընկերության անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն սույն որոշմանը կից Հավելված 2-ի:
4. Հանձնարարել Ընկերության գործադիր տնօրեն Լուիզա Իզրարյանին կատարել անվանական արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման ու ցուցակման կազմակերպչական աշխատանքները, մասնավորապես՝
   - կազմակերպել «ԳԼՈԲԱԼ ԿՐԵԴԻՏ» ՈՒՎԿ-ի կողմից «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» բաց բաժնետիրական ընկերության հետ «Անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարման» պայմանագրերի կնքումը,
   - բանակցել և կնքել պարտատոմսերի լավագույն ջանքերի սկզբունքով չերաշխավորված տեղաբաշխման ծառայությունների մատուցման պայմանագիր,
   - ապահովել պարտատոմսերի տեղաբաշխման ավարտից հետո կարգավորվող շուկայում պարտատոմսերի առևտրի նպատակով ցուցակման հայտի ներկայացումը «Նասդաք Օէմէքս Արմենիա» ԲԲԸ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 20.07.2015 թվականից:

Խորհրդի նախագահ՝ **Էդուարդ Մարության**

20 հուլիսի 2015թ.
ժամը 10:00
ք.Երևան